

127. ԿՏՐՏՎԱԾ ՏՂԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով ըլում ա, չի ըլում մի թաքավոր ա ըլում։ Էտ թաքավորին իրեք տղա ա ունենում, իրեք էլ ախչիկ։ Թաքավորը որ շատ մենձացած ա ըլում, կանչում ա իրա իրեք տղին օսիաթ ա անում։ Ասում ա.— Ա՛յ որդիկ, ես մենձացել եմ, մի քանի օրից հետը կը մեռնեմ, ես ձեզ օսիաթ եմ անում, իմ իրեք հատ ախչիկը որ մարդու տալու ըլեք, առաջի անգամը ով որ կը գա կուզի՝ կը տաք նրան։

Մի քանի ժամանակից հետո թաքավորը մեռնում ա։

Օրերից մի օր թաքավորի պուճուր տղեն տանը չի ըլում, ավղուշ ա գնացած ըլում, իրիգունը գալիս ա տունը, տեսնում ա մենձ քիրը նոթերը կիտած նստել ա։ Էքսի օրն էլ որ էթում ա՝ գալիս ա տեսնում էն մի քիրն էլ ա նոթերը կիտե. վերջի օրն էլ՝ պուճուրը։

Մի օր հարցնում ա քվորտանցը, ասում ա.— Խի՞ եք նոթերներդ կիտե։

Մենձ քիրն ասում ա.— Բա ի՞նչ անենք, իրեք քվորս էլ ուզընկան եկան դևերը, ոչ մեկին էլ չտվեց մեր մենձ ախպերը։

— Դե որ ըտենց ա,— ասում ա,— էտ դևերը ո՞րդի են։

Մենձ ախչիկը դևերի տեղն ասում ա, տղեն կանչում ա իրանց մեհտարներից մեկին, ասում ա.— Կէթաք Սև դևին, Սպիտակ դևին, Կարմիր դևին կասեք՝ թաքավորի պուճուր տղեն ձեզ կանչում ա։

Մեհտարը գնաց, էքսի օրը դևերին վե կալավ էկավ։

Դևերը որ էկան հասան թաքավորի պալատը, տղեն որ դևերին տեհավ, ասեց.— Դուք ո՞րդ եք իմ քվերտանց ուղրմ։

Սև դևն ասեց. «Ես մենձ քվորդ ի ուղրմ», Սպիտակ դևն ասեց. «Ես էլ միջնակին ի ուղրմ», Կարմիրն էլ ասեց. «Ես էլ պուճուրին ի ուզրմ»։

Բերեց ամենքին իրան ուզածը տվեց։ Ախպրտինքը շատ ին նախանձրմ պուճուր տղի վրա, դևերը որ էտ բանը իմացան, վեկալան իրանց ուզածները ու պուճուր աղից շնորհակալություն հայտնեցին, իսկ մեծերիցը չէ, էլան գնացին։

Խաբարը տանք մի ուրիշ թաքավորից։ Էտ թաքավորը մի սիրուն ախչիկ ուներ. տվ որ գալիս էր ուզելու, չէր տալի։ Տեսավ, որ ուզընկանները շատ են զոռ անրմ, բերեց իրա դռանը մի քառատուն գազանոց ֆոր քանդեց, ամեն երկիր էլ ջառ քցեց, ասեց.— Ով որ կարենա էս ֆորի վրովը ձին թռցնի՝ իմ ախչիկը կը տամ ընտրրան։

Էս թաքավորի պուճուր տղեն էլ մի լավ ձի ուներ. պուճուր տղեն որ էտ բանը իմացավ, վեկացավ նստավ իրա ձին ու քշեցգնաց էտ թաքավորի երկիրը։ Գնաց հասավ թաքավորի քաղաքին, տեհավ ամենքը մի դհից ձի են քշում, որ ֆորի վրով թռցնեն, բայց չեն կարրմ։ Էտ օրը էտ տղի ձին սպիտակել էր, հեռվից տեհան, որ մի սպիտակ ձիավոր ա գալի։ Մեկ էլ տեհան էկավ ֆորի վրովը թռցրեց ու անցավ էն դիհը։ Սաղ զարմացած կայնան, թաքավորն ասեց.— Էտ տղեն բերեք, իմ ախչիկը տամ ընտրան։

Տղեն քշեց քաղաքից դուրս էկավ։ Էքսի օրն էլ էկավ, քշեց ֆորի վրովը թռցրեց։ Էտ օրը ձին կարմրել էր։ Երրորդ օրն էլ էկավ էլի ֆորի վրովը թռցրեց. էտ օրն էլ ձին սևացել էր։ Թաքավորն ասեց.— Ես էս իրեքից որի՞ն տամ ախչիկս։

Վազիր-նազիրներն ասեցին.— Թաքավորն ապրած կենա, էտ երեքն էլ որ կա՝ առաջի գալոզ տղեն ա, օրեց-օր ձիու ռանգն ա փոխում։

Թաքավորը զարմանալով կանչեց տղին.— Ա՜յ տղա,— ասեց,— որ դու ընտենց քաշ տղա ես, ես իմ ախչիկը պտի տամ քեզ, բայց դու ղոչաղ ըլի, որ ախչիկը, մի դարվեշ կա, ընտրա ձեռքից ազատես։

Տղեն ասեց.— Իմ հավլունի թուրը երկիր կը քանդի, դարվեշը կարա՞ իմ ձեռիցը ախչիկ փաղցնի։

Թաքավորը կանչեց ախչկան, տվեց տղին ու ասեց.— Տար, հալալ ըլի քեզ, միայն դարվեշի ձեռիցը, ղոչաղ ըլի, ազատա։

Տղեն վեկալավ ախչկան, բերեց։ Շատ էր էկե՝ քիչ, ճամփին մտածեց. «Իմ մենձ ախպերտինքը կնիկ չունեն, ես որ ըստրան տանեմ, ախպերտինքս տենան, անպատճառ իմ ձեռից կը խլեն, լավն էն ա, էթամ մի զաղի մեջ, հաց-մաց տանեմ, ընդի ապրեմ ո՛չ ախպերտիքս իմանան, ո՛չ էլ դարվեշը»։

Դու արի տես՝ դարվեշը էտ տղի ետևից ղարաուլ էր քաշըմ. տղեն գնաց հասավ մի ձոր, էն ձորի մեջը մի զաղա գտավ, ըտեղ նստեց թաքավորի ախչկա հետ։

Տղեն օրական էթըմ էր հանդը ավղուշ, թաքավորի ախչկան էլ ասըմ էր.— Ես որ քեզ մի սհաթ չտենամ, կը գժվեմ։ Օրական կը վեկենաս, կը կայնես մեր զաղի քարափի գլխին, որ ես հա՜, քեզ տենամ։

Թաքավորի ախչիկը օրական ըտենց էր անըմ։

Խաբարը տանք դավրեշից։ Դավրեշը որ իմացավ ախչկա տեղը, վեկացավ գնաց իրա լալազար ձին բերեց ու ձիուն ասեց.— Քանի՞ սհաթըմը կարաս թաքավորի ախչկանը հասնես։

Ձին լեզու ըլավ, ասեց.— Վեկաց նստի վրես, աչքդ խփա, բաց արա՝ կը հասնեմ թաքավորի ախչկան։

Դարվեշը նի էլավ, աչքը խփեց, բաց արեց, տեհավ թաքավորի ախչկա կուշտն ա։ Բերեց թաքավորի ախչկա ձեռ ու ոտը կապեց, մի հատ մենձ փետ գրեց ախչկա տեղը, մի շոր էլ ըցոց փետի ղլխին, որ տղեն չիմանա թաքավորի ախչկան տարել են, դարվեշը վեկալավ ախչկան ու գնաց։

Տղեն իրիգունը ուրախ-ուրախ տուն դառավ։ Տեհավ որ թաքավորի ախչիկը տեղից ժաժ չի գալի. մոտացավ, տեհավ մի հատ փետ երկնցրած ա, մի հատ շոր էլ վրեն քցած։ Տղեն որ տեհավ՝ խելքը գնաց, վեր ընկավ։ Շատ էր մնացե, քիչ, մեկ էլ տեսավ ուշն էկավ գլուխը, ասեց. «Վե կենամ էթամ մեր փեսեքին հայտնեմ, բալքի իմանան, թե դարվեշը որդի ա տարել ախչկանը»։

Վեկացավ, նիլավ ձին, գնաց մենձ դևի տունը։ Գնաց մտավ դևի տունը, քիրը, որ տեհավ պուճուր ախպերը էկել ա, ուրախ-ուրախ բերեց ախպորը պատվեց, ասեց.— Ա՜յ ախպեր, հլա արի մտի տախտի տակը, թող քու մենձ փեսեն գա, ես ասեմ քու միրզամներից մեկը էկել ա, տենամ նա ինչ կասի։

Տղեն մտավ տախտի տակը, իրիգունը դևը տուն էկավ. թաքավորի ախչիկը դևին ասեց.— Աշկտ լիս ըլի, միրզամդ էկել ա։

Դևն ասեց.— Մենձը ըլի՝ մենձ թիքեն անգաճը կը թողամ, միջնակն ըլի՝ նմանապես, պուճուրն ըլի՝ գլխիս վրա տեղ ունի։

Ասում ա.— Պուճուր ախպերս ա էկե։

Դևն ասում ա.— Տնաշե՛ն, բա խի՞ ես թաք կացե, վեկաց ուտենք, խմենք, քեփ անենք։

Տղեն դուս ա դալի տախտի տակից։ Ուտում են, խըմում են պըրծնում են, տղեն ըսկսում ա իրա գլխի էկածը պատմել դևին։ Դևը որ իմանում ա, ասում ա.— Իմ միջնակ ախպերը կիմանա ըտրա տեղը, գնա նրա կուշտը։

Տղեն ասում ա.— Դե որ ըտենց ա, ա՛ռ էս դանակը քու կուշտը, որ էս դանակը բացվի՝ իմացի, որ ես նեղ տեղ եմ, արի հասի։

Տղեն վեկացավ գնաց միջնակ քվոր տունը։ Բերեց միջնակ քիրն էլ ըտբան պահեց, որ տենա դևի սիրտը իրա ախպրտանց վրա ցավը՞մ ա։

Դևը իրիկունը տուն էկավ, ախչիկը գնաց առաջն ու ասեց.— Աշկդ լիս ըլի, միրզամդ եկել ա։

Դևն ասեց.— Մենձը ըլի՝ մենձ թիքեն անգաճը կը թողամ, միջնակը ըլի՝ նմանապես, պուճուրն ըլի՝ գլխիս վրա տեղ ունի։

Էս որ ասեց, տղեն տախտի տակիցը դուրս էկավ. կերան, խմեցին, քեֆ արին պրծան, նստան, տղեն իրա գլխի էկածը պատմեց։

Դևն ասեց.— Օ՜, էտ իմ պուճուր ախպերը կիմանա, գնա պուճուր ախպորս կուշտը։

Տղեն ասեց.— Դե որ ըտենց ա, ա՛ռ էս հայլին քու կուշտը, որ օրը որ հայլու էրեսը խավարի՝ իմացի, որ նեղ տեղն եմ, հասի ինձ օգնության։

Տղեն վեկացավ գնաց։ Գնաց հասավ պուճուր քվոր տունը։ Պուճուր քիրն էլ բերեց տղին պահեց, իրիգունը դևը տուն գալուց ախչիկը գնաց դևի առաջը, ասեց.— Աշկդ լիս ըլի, միրզամդ էկել ա։

Ասեց.— Մենձը ըլի՝ գնա դուս արա, թող էթա։ Միջնակը ըլի՝ էլի դուս արա, թող էթա, որ պուճուրը ըլի՝ կյանքս ղուրբան ա ընտրան։

Էտ որ ասեց, տղեն դուս էկավ թախտի տակից, փաթաթվեցին իրար, նորից նստան կեր ու խում արեցին, տղեն գլխի էկածը պատմեց դևին։

Դևն ասեց.— Էտ դարվեշը որ կա՝ էս աշխարքը քանդել ա, զուր տեղը մի ախչկա համա մի էթա, կյանքդ բագա տա։

Տղեն ասում ա.— Չէ՜, ես պտի էթամ։

— Դե որ,— ասում ա,— կէթաս, դարվեշի տունը Սև ծովի, Սպիտակ ծովի կուշտն ա, կարաս՝ գնա բեր։

Տղեն ասում ա.— Դե որ ըտենց ա, առ իմ մատանիքը, դիր մատդ, որ մատանիքը սևացավ՝ իմացիր, որ նեղ տեղն եմ ընկե, արի հասի։

Տղեն վեկացավ, գնաց։ Գնաց հասավ Սև ծովի, Սպիտակ ծովի կուշտը, մի հատ օխտը էտաժանի ամարաթ կար, ասեց. «Կա՝ էս ա դարվեշի տունը, չկա՝ էս ա»։ Գնաց կայնավ էտ տների տակը. ասեց. «Ո՞նց իմացնեմ ախչկան, որ վեկանա, փախչենք»։ Դուռը ծեծեց՝ չիմացավ, կամաց ձեն տվեց՝ չիմացավ, մի քար վեկալավ քցեց՝ շուշեն ջարդվավ։ Ախչիկը շուշի շարդված տեղից գլուխը հանեց, թամաշ արեց, տեհավ, որ թաքավորի տղեն ա. էկել ա, որ իրան տանի։ Վեր էկավ ուրախ-ուրախ տղի հետ փաթաթվան իրար։

Ախչիկը ասեց.— Վեկա՛ց էթանք, դարվեշը հմի կը գա։

Տղեն ախչկանը նստացրեց ձիու թարքը ու փախցրեց տարավ։ Շատ էր գնացե՝ քիչ, գարվեշը եկավ տունը, տեհավ թաքավորի ախչիկը չկա։ «Հա,— ասեց,— կա՝ թաքավորի տղեն ա տարե, չկա՝ թաքավորի տղեն ա տարե»։

Գնաց ձին քաշեց գոմից, նստավ, հավալամիշ էլավ երկինքը. շատ գնաց՝ քիչ՝ հասավ տղին։

— Հե՛յ,— ասեց,— թաքավորի տղա, ո՞ւր ես տանում իմ կնիկը։

Թաքավորի տղեն որ դարվեշին տեհավ, չոքերը դողաց։ Դարվեշը հասավ մի սիլլա տվեց տղին ու ախչիկը ձեռիցը խլեց տարավ։

Թաքավորի տղեն նորից ընկավ ախչկա եգեվը, գնաց տեհավ, որ դարվեշը տունը չի, ախչկան կանչեց վե բերեց ցած, էլեստ դրեց ձիու վրեն, փախցրեց։

Նատ էր գնացե, քիչ՝ դարվեշը էկավ տունը, տեհավ, որ թաքավորի ախչիկը չկա, քաշեց նստեց ձին ու թուրը վեկալավ, գնաց։

Ախչիկը դառավ ետ թամաշ արեց, ասեց.— Ա՛յ տղա, էլեստ էկավ։

Ասավ.— Տես՝ հեռո՞ւ ա, թե՝ մոտ։

Ախչիկը թամաշ արեց ու ասեց.— Տղա՛, դարվեշը հասավ։

Մեկ էլ տեհավ փշշալով վեր էկավ աղաքները։

Ասեց.— Է՛, թաքավորի տղա, որ ես քեզ չփրթեմ, դու քու դնին չես կայնի։— Թուրը քաշեց ու տղին ղիմա-ղիմա կոտորեց։

Ախչիկը լաց էլավ, տղի կտորները թոփ արեց, լցրեց ձիու խուրջինը ու բրախեց, ձին գնաց։

Դարվեշը վեկալավ ախչկան ետ բերեց, ասեց.— Թե որ մեկ էլ կը տանի՝ թող պարծենա։

Խաբարը տանք դևերից. պուճուր դևը տեհավ մատանիքը սևացել ա. «Օ՜հ,— ասեց,— թաքավորի տղին փորձանք ա պատահել»։ Վե կացավ ու առանց խոսալ գնաց միջնակ ախպոր կուշտը։ Ասեց.— Ա՜յ միջնակ ախպեր, քեզ նշան չի՞ տվե մեր միրզամը։

Միջնակ ախպերը մտիկ արեց, տեհավ հայլին խավարել ա, ասեց.— Հայլին խավարել ա, կա-չկա՝ մի բան ա պատահել։

— Որ ըտենց ա, վեկաց գնանք մեր մենձ ախպոր կուշտը։

Գնացին մենձ ախպոր կուշտը, տեհան մենձ ախպոր դանակն էլ ա բացվե։ Մենձ դևն ասեց.— Հա՜յ գիտի, վեկացեք էթանք տղի հավարին։

Վեկացան հենց տանից դուս էկան, տեհան թաքավորի տղի ձին գալիս ա, բայց վրեն մարդ չկա։ Վազան ձին բռնեցին, տեհան խուրջնի մեջը տղի ջանդակի կտորները լցրել են։ Լաց ըլելով բերեցին մենձ դևի տունը, ամենքը մի հնար սկսեցին ձեռք բերելը։ «Բա ո՞նց անենք, լավացնենք թաքավորի տղին»։

Մենձ դևը ասեց.— Կտորները շարելը ձեզանից, լավացնելը ինձանից, ճամփու դնելը միջնակ ախպորից։

Պուճուր ախպերը ջանդակի կտորները տեղը տեղին դրեց, մենձ ախպերը բերեց կտորները կարեց, ձութը քսեց մի շորի վրա, տղի ջանդակը դրեց շորի մեջը ու փաթաթեց, որ կտորները չխախտվի իրարից։ Նորից վեկացավ գնաց իրա տան պահած անմահական ջուրը բերեց, մի կաթ լցրեց տղի բերանը։ Տղեն զարթնեց ու աշկերը տրորեց.— Օ՜,— ասեց,— ինչ ջատ քնել եմ։

Մենձ դևն ասեց.— Ի՞նչ քնել, ինչ բան, այ տնաշեն, կտորներդ հազար ին դառե։

Էլի նորից ախչիկը միտն ընկավ։— Ա՜խ,— ասեց,— ես պտի գնայի թաքավորի ախչիկը բերեի, մտահան եմ արե։

Մենձ դևն ասեց.— Վերջ տո՜ւր, ափսոս ես։

Տղեն չլսեց, վեկացավ գնաց։ Միջնակ դևը տարավ ճամփու դրեց ու գառավ էկավ։

Տղեն գնաց հասավ դարվեշի տներին։ Ախչիկը որ տեհավ, ինքն իրան զարմացավ, ասեց.— Ա՜յ տղա, ափսոս չե՞ս ղու, թող գնա ուրիշի առ, էլի։ Էլ ինձանից էս աշխարքումը չկա՞։

Տղեն ասեց.— Կաս-չկաս՝ դու ես, ես քեզ պտի տանեմ։

Ասըմ ա.— Էլ ինձ չես կարա զորով տանել, մնում ա մի հնարք անել։

Տղեն ասում ա.—Դե որ ըտենց ա, դու նրա հոգու տեղը իմա-

ցի, ես կէթամ էնտրա հոքին կը բռնեմ, հոքուն կը սրպանեմ, բալ-
քի նա մեռնի։

Ախչիկն ասում ա.— Լավ, դու գնա թաք կաց, ես կիմանամ՝ քեզ կասեմ։

Տղեն էթում ա տափ ա կենում, դարվեշը տուն ա գալի, տե-
նում ա ախչիկը նոթերը կիտել ա, ասում ա.— Հը՞, ի՞նչ կա, թա-
քավորի ախչիկ։

— Ինչ պտի ըլի, դու սաղ օրը էթում ես, քե համա ման ես գալի, ես տունը մենակ գժվում եմ. հոգուդ տեղն էլա չես ասում, որ մեկ-մեկ հետը խոսամ։

— Է՞, տնաշեն,— ասում ա,— իմ ֆոքին որ կա, էն ավելն ա, որ մաշվեց՝ ես կը մեռնեմ։

Էքսի օրը դարվեշը էթում ա ման դալու, ախչիկը ավելը ճխտում ա թունդիրը։ Տղեն գալիս ա ախչկան հարցնում ա.—Իմա-
ցա՞ր,— ասում ա,— հոգու տեղը։

— Իմացա, լավ էլ կրակեցի։

— Ի՞նչն էր, որ կրակեցիր։

Ասեց.— Ավելն ա։

Ասեց.— Քեզ խափել ա, ավելից էլ հոգի կըլի՞։ Մի լավ իմա-
ցիր, էքուց ինձ ասա։

Ախչիկը տեհավ, որ իրիկունը դարվեշը տուն էկավ, էտ օրը ավելի շատ նոթերը կիտեց, նստավ։

Դարվեշը հարցրեց.— Էսօր խի՞ ես նոթերդ կիտել։

Ասեց.— Ընենց բան ես խոսըմ, որ էփած հավն էլ կըծիծաղի, ավելն ի՞նչ ա, որ հոգի ըլի, դու ինձ չես հավատըմ, էլ ես քու կուշ-
տը խի՞ եմ ապրում։

Դարվեշը տեհավ, որ թաքավորի ախչիկը շատ ա նեզանըմ, ասեց.—Ա՜յ տնաշեն, ինչ ես ուղըմ իմ ֆոքուց, իմ ֆոքին որ կա՝ Սև ծովի, Սպիտակ ծովի արանքին մի սպիտակ դև կա, ընտրա փորին ա։ Մի պուճուր ղուտկի մեջ իրեք հատ ծիտ ա, որ էն ծտերը սատկեն՝ ես էլ կմեռնեմ։

Մնաց, առավոտը դարվեշը գնաց ման գալու, ախչիկը վեր էկավ, վազավ տղի կուշտը ու ասեց.— Ա՜յ տղա, էսօր լավ իմա-
ցել եմ։

— Հը,— ասեց,— ի՞նչ ա, չըլի էլի խափել ա։

Ասեց.— Սև ծովի, Սպիտակ ծովի արանքին մի սպիտակ դև կա, դարվեշի հոքին ընտրա փորի մեջն ա, մի ղուտկի մեջ իրեք հատ ծիտ ա։

— Լավ,— ասեց տղեն,— որ ըտենց ա, ես կէթամ կը սպանեմ։

Տղեն ձին նիլավ ու գնաց։ Գնաց հասավ Սև ծովի, Սպիտակ ծովի արանքը, տեհավ հեռվից մի ջանավար գև ա էրևում։ Դևը որ ըտրան տեհավ, ընենց եգին էկավ դրբա տղեն, որ ընրա գալու ծովի լափինը շուռ էր գալի իրար գլխի, էլ գևի աշկերը բան չէր տենըմ։ Տղեն որ տեհավ դևի գալը, տվեց գնաց Սև ծովի մեջտեղով էկավ, որ դևի քամակից տա։ Բայց դևի աշկին էն տղեն չէր էրևում, ջրի լափինը ընդար որ շուռ էր գալի գլխին։ Տղեն մոտեցավ դևի ետևից հավլունի թուրը որ քաշեց, էն սրհաթը դարվեշի գլուխը ցավաց։ «Օ՜,—ասեց,— տղեն հոգուս տեղը իմացել աս ոա վազեց։

Թող դարվեշը գնա, մենք խաբարը տանք տղից։ Տղեն հասավ դևին, որ մի հատ հավլունի թրով չտվեց՝ դևի օխտը գլուխն էլ վրից կտրեց։ Էն սհաթը դևի փորը ճղեց, տեհավ, որ մի պուճուր շուշե ղուիթկ կա մեջը, ղուիթկը վե կալավ, բաց արեց, մի ծիտը հանեց, շըլինքը քաշեց ու քցեց։ Դարվեշը քիչ թուլացավ ու վազեց դրբա տղեն։ Տղեն որ տեսավ դարվեշը գալիս ա, էն մեկի շլինքն էլ քաշեց։ Դարվեշը աղաչելով մոտեցավ ասեց.— Դու քու աստվածդ, էտ մեկն էլա տուր։

Տղեն ասեց.—Մոտ արի՜, տամ։

Դարվեշը մոտացավ, տղեն ծտի գլուխը բռնեց իրա ձեռը, շանդակը տվեց դարվեշին։

Դարվեշը ձեռը մեկնեց, ափալ-թափալ ծիտը բռնեց, հենց բռնելուն պես, տղեն թափ տվեց ու գլուխը մնաց իրա ձեռը, շանդակը՝ դարվեշի։ Հենց էտ սհաթը դարվեշը մեռավ ու իշավ ջրի տակը։ Տղեն նորից ուրախ-ուրախ էկավ դարվեշի տունը, աներկյուղ մտավ նեքսև։ Ախչիկը որ տեհավ, վազեց փաթաթվեցավ։

— Հը, ի՞նչ արիր,— ասեց ախչիկը։

— Էն օրին քցի, որ նա էլ քու էրեսը տենա՜, սրպանեցի, ծովը քցեցի։

Որ ըտենց ա, արի նստենք մի իշտահով հաց ուտենք։

Նստան հաց կերան, պրծան, վեկացան դարվեշի տան թանգակին ապրանքները սաղ վե կալան ու գնացին։ Գնացին հասան իրանց երկիրը։ Պատրաստություն տեհան, բերեցին Դարաչիչակու եզան միտը, Եղվարդի՝ հացը, Աղրուլազա՝ բրինձը, Գյուլաբլվա՝ եղը, Ղըղըլթամուրա՝ գինին, Հաջիղարի՝ արաղը։ Մարդ ղրկեց կանչեց իրա փեսեքին՝ Սև դևին, Կարմիր դևին, Սպիտակ դևին ու իրա իրեք քվորը։ Օխտը օր, օխտը քշեր հարսանիք արին։ Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։ Երկնքից իրեք խնձոր վեր էկավ. մեկը՝ աստղին, մեկը՝ լսողին, մեկն էլ ալամ աշխարին։